ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

Հոկտեմբերի 10-ին տեղի ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի և ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի միացյալ գիտական նստաշրջան՝ նվիրված կոմունիստական կուսակցության ականավոր գործիչ, Վ. Ի. Լենինի հավատարիմ զինակից ու աշակերտ, հայ ժողովրդի մեծ զավակ Ստեփան Շահումյանի ծննդյան 90-րդ տարեդարձին։

Նստաշրջանը բացեց մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի դիրեկտորի տեղակալ, պատմական գիտությունների թեկնածու Վ. Ավետիսյանը։ Նստաշրջանում Ստ. Շահումյանի կյանքի և գործունեության մասին կարդացվեցին մի շարք զեկուցումներ։ «Ստեփան Շահումյանի հեղափոխական գործունեությունը արտասահմանում» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Ղարիբջանյանը։ Զեկուցողը նշեց, որ Ստ. Շահումյանի կյանքում առանձնահատուկ տեղ է գրավում նրա հեղափոխական գործունեությունը արտասահմանում։ 1902 թ. աշնանը երիտասարդ Շահումյանը մեկնում է Գերմանիա և ընդունվում Բեռլինի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը։ Համալսարանում նա լսում է միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչներ Ա. Բեբելի, Ֆ. Մերինգի և մյուսների դասախոսությունները, ծանոթություն հաստատում նրանց հետ, դառնում ՌՍԴԻԿ Բեռլինի խմբի ամենաակտիվ անդամներից մեկը։

Ստ. Շահումյանի հեղափոխական գործունեությունն առավել բեղմնավոր է դառնում Շվեյցարիայում։ Նա Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ լայն աշխատանք է ծավալում Ժնևում հայերեն ու վրացերեն մարքսիստական գրականության հրատարակման ու տարածման համար։ Ստ. Շահումյանը այդ տարիներին զգալի գործ է կատարում նաև Եվրոպայի երկրներում սովորող հայ երիտասարդության մեջ մարքսիստական ուսմունքի պրոպագանդման ուղղությամբ։

Շահումյանի, ինչպես նաև կոմունիստական կուսակցության մյուս ականավոր գործիչների, հեղափոխական գործունեությունը արտասահմանում,— ասաց Գ. Ղարիբջանյանը,— հանդիսանում է բոլշևիզմի ինտերնացիոնալ կապերի կարևոր օղակը, որը պետք է դառնա պատմաբանների լայն ուսումնասիրության առարկա։

Պատմական գիտությունների թեկնածու Բ. Օհանջանյանը «Ստեփան Շահումյանը բոցաշունչ ինտերնացիոնալիստ» թեմայով իր զեկուցման մեջ հանդամանորեն վերլուծեց ազգային հարցի վերաբերյալ Շահումյանի մի շարք աշխատությունները, հոդվածներն ու ելույթները։

«Ստ. Շահումյանը և հայ գրականության մի շարք հարցերը» զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Սարգսյանը։ Նա ասաց, որ Ստ. Շահումյանն իր գործունեության հենց սկզբից ուշադիր վերաբերմունք է ցուցաբերել գրականության և արվեստի հարցերի նկատմամբ, ուսումնասիրել է հայ, ռուս, եվրոպական դասական գրողների, հեղափոխական դեմոկրատների գործերը։ Մեծ է եղել Շահումյանի դերը հայ պրոլետարական գրականության ստեղծման ու զարգացման գործում։

Ստեփան Շահումյանի վերաբերյալ նյութերի հավաքագրման և ցուցադրման մասին հաղորդումով հանդես եկավ Հայաստանի հեղափոխության թանգարանի դիրեկտորի տեղակալ Բ. Ղարիբյանը։

Ստեփան Շահումյանի կյանքից հուշեր պատմեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, հին բոլշևիկ Ա. Կարինյանը։

* * *

Հոկտեմբերի 11-ին ՀՍՍՀ ԳԱ փոքր դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության, հնագիտության ու ազգագրության ինստիտուտների գիտական համատեղ նստաշրջանը՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյակին։

Նստաշրջանը բացեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր Բ. Առաքելյանը։

Նստաշրջանում կարդացվեցին մի շարք զեկուցումներ։ «Երևանի հիմնադրումը» զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Մ. Իսրայելյանը, «Արարատյան դաշտը որպես Հայաստանի մայրաքաղաքների օրրան» թեմայով՝ պատմական գիտությունների դոկտոր Գ. Խ. Սարդսյանը, «Երևանի միջնադարյան հուշարձանները»՝ պատմական գիտությունների դոկտոր Կ. Ղաֆադարյանը, «Երևանը XVIII դ. և XIX դ. առաջին կեսին»՝ պատմական գիտությունների թեկնածու Վ. Դիլոյանը, «Սոցիալիստական Երևանը» թեմայով՝ պատմական գիտությունների թեկնածու Կ. Կոզմոյանը։

ՀՍՍՀ ԳԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 16-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովը՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյա հոբելյանին։

Ժողովում բացման խոսքով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։

— Երևանը իր հիմնադրման օրից մինչև այժմ,— ասաց ակադեմիկոս Վ. Համբարձումյանը,— տեսել է 100 սերունդ, որից երկու սերունդը ապրել և մեծամեծ գործեր է կատարել։ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո։ Մոտ հինգ տասնամյակների ընթացքում մեր հանրապետության աշխատավորները կերտեցին իրենց հոյակապ Երևանը, որն այսօր համարվում է լավագույն ու գեղեցկագույն մայրաքաղաքներից մեկը։ Այն աճել ու բարգավաճել է օրեցօր, ժամ առ ժամ։ Իր այսօրվա վիճակով Երևանը գերազանցում է այն երազանքները, որ երբևիցե ունեցել են նրա բնակիչները, կառուցողները։ Իր բացման խոսքի վերջում Վ. Համբարձումյանը նշեց, որ Երևանի մեծ նվաճումների համար Հայաստանի աշխատավորները իրենց շնորհակալական խոսքն են ուղղում կոմունիստական կուսակցությանը, Սովետական մեծ Միությանը, որի բազմազգ ընտանիքում ստացել են ապրելու և ստեղծագործելու լայն հնարավորություններ։

Հայաստանի գիտնականների համաժողովում Երևանի 2750-ամյա հոբելյանի առթիվ կարդացվեցին մի շարք զեկուցումներ։ «Ուրարտական ամրոցներ (Էրեբունի, Թեյշեբաինի) Երևանի տերիտորիայի վրա» թեմայով զեկուցեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Պիոտրովսկին։ Իր զեկուցման մեջ նա վերլուծեց Երևանի պատմությանը վերաբերող խոշորագույն կովկասագետների, ուրարտագետների և հայագետների հայտնաբերած և ուսումնասիրած հնագիտական հարստությունները, այդ թվում Մ. Նիկոլսկու, Ն. Մառի, Ե. Շահազիզի, Գ. Ղափանցյանի, Մ. Թումանյանի, Ն. Հովհաննիսյանի և ուրիշների ուսումնասիրությունները։ Այնուհետև ակադեմիկոս Բ. Պիոտրովսկին նշեց, որ Արարատյան դաշտավայրի երկու բլուրների՝ Կարմիր բլուրի և Արինբերդի վրա հիմնված ամրոցները խոշոր դեր են խաղացել Ուրարտական պետության տնտեսական և քաղաքական կյանքում, դարձել են Երևանի բնօրանները։ Դարեր են անցել Էրեբունիի հիմնադրման օրերից. այդ երկար ժամանակաշրջանի ոչ բոլոր հատվածներն են բավարար չափով ուսումնասիրված։ Բայց հայտնաբերված նյութերը որոշակիորեն ընդգծում են նրա սկիզբը՝ մեր թվագրությունից առաջ 782 թվականը և որ այդ օրից սկսած այստեղ կյանքը հարատևել է անընդմեջ։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Երեմյանի զեկուցումը նվիրված էր «Էրեբունի—Երևանը միջազգային առևտրի մայրուղիների վրա» թեմային։ Հարուստ նյութերի հիման վրա ակադեմիկոս Ս. Երեմյանը նշեց, որ Էրեբունի—Երևանը խոշոր դեր է խաղացել միջազգային ապրանքափոխանակության մեջ։ Ստրաբոնի վկայությամբ Բոսպորի թագավորության, Բաբելոնի ու Հնդկաստանի միջև միջազգային առևտրական փոխանակությունը, որի միջնորդներն են եղել հայերն ու մեդացիները, առնչություն ունի Էրեբունի—Երևանի սկզբնական պատմության հետ. Չնայած մեզ հասած տեղեկությունների սղությանը, ասաց զեկուցողը, այնուամենայնիվ, անուղղակի փաստերի հիման վրա կարելի է կռահել, որ այդ միջազգային առևտրի մայրուղին անցնում էր Արաքսի հովտով և ճյուղավորվում Արարատյան դաշտում, հատկապես Էրեբունիի շրջակայքում։ Հենց դրանով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ Էրեբունի—Երևանը իր գոյության սկզբնական շրջանում առաջատար դեր էր խաղում Արարատյան դաշտավայրում։

Միջազգային կապերի մեջ Էրեբունի—Երևանի կարևոր դեր խաղալը ապացուցվում է նաև նրանով, նշեց զեկուցողը, որ ուրարտացիների ժամանակ հայտնի է եղել այն ճանապարհը, որը Էրեբունիից տանում էր Հրազդանի ընթացքով դեպի Սևանա լիճը և այնտեղից՝ դեպի Աղստև

դետի հովիտը։ Այստեղ, այժմյան Ղազախ քաղաքի մոտերքում, գտնվել է մի այլ հանգուցակետ. որտեղից ճանապարհը ճյուղավորվում էր դեպի արևմուտք՝ վրաց աշխարհը, իսկ այնտեղից էլ՝ Կողքիսի նավահանգիստները, ապա նաև դեպի արևելք, Աղվանք և Մերձկասպյան Մաղքթաց թագավորությունը։

«Երևանը Սովետական Հայաստանի մայրաքաղաք» թեմայով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Ա. Սիմոնյանը։ Խոսելով սովետական իշխանության անցած 48 տարվա ընթացքում Երևանի կարգացման կարևոր էտապների մասին, զեկուցողը նշեց, որ սովետական իշխանությունը ստեղծեց պատմական նոր իրադրություն, վերացվեցին Երևանի զարգացումը կաշկանդող կապանքները, առաջ եկան նոր գործոններ, որոնք անանախադեպ էին նրա 2750-ամյա պատմության մեջ։

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն խոսեց մայրաքաղաքի կառուցապատման վերջին տասնամյակների նվաճումների, ինդուստրիայի հուժկու զարգացման մասին, որի շնորհիվ Երևանը դարձել է ժամանակակից արդյունաբերության խոշոր կենտրոն՝ իր էներգետիկայի, քիմիական, մեքենաշինության, սարքաշինության, ռադիոէլեկտրոնիկայի, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերության և այլ ճյուղերով։

Հայաստանի գիտնականների հանրաժողովին մասնակցում էին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը, ՀԿԿ կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը, Երևանի քաղսովետի գործկոմի նախագահ Գ. Հասրաթյանը։